ՍԴ/0070/01/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 սեպտեմբերի 2022 թվական ք.Երևան

Ուսումնասիրելով թիվ ՍԴ/0070/01/22 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 20-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2022 թվականի սեպտեմբերի 1-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ ՍԴ/0070/01/22 քրեական վարույթը՝ Արմեն Հակոբի Ալեքսանյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ն.Օհանյանը 2022 թվականի սեպտեմբերի 2-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 12-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ/0070/01/22 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 20-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ/0070/01/22 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Թիվ ՍԴ/0070/01/22 վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2022 թվականի սեպտեմբերի 22-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Նախնական դատաքննությունների ժամանակ տուժողի իրավահաջորդ Հովիկ Մելքոնյանը ներկայացրել է միջնորդություն՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին, նշելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում:*

Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Արմեն Ալեքսանյանը համաձայնել է քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելուն և խնդրել բավարարել միջնորդությունը:

Հանրային մեղադրող Հարություն Անդրեասյանը չի առարկել քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելուն:

(…) [Ն]կատի ունենալով, որ մեղադրյալ Արմեն Ալեքսանյանը համաձայնել է քրեական գործի ընդդատությունը փոխելուն, գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից գերակշիռ մասը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս,

ուսրի դատարանը գտնում է, որ սույն քրեական գործի տարածքային ընդդատությունը պետք է փոխել և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան»[1]:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի սեպտեմբերի 20-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորումներից բխում է, որ տարածքային ընդդատությունը փոխելու հիմք կարող է հանդիսանալ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում բնակվելու հանգամանքը:*

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ արձանագրվել է, որ սույն քրեական գործով մեղադրյալ Արմեն Ալեքսանյանը, տուժողի իրավահաջորդ Հովիկ Մելքոնյանը, 5 վկաներից 4-ը՝ Դավիթ Կիրակոսյանը, Անդրանիկ Ղազարյանը, Միքայել Ղազարյանը, Դավիթ Սարգսյանը, պաշտպան Անի Թորոսյանը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս՝ Երևան քաղաքում և դրա մերձակայքում:

Մինչդեռ, թիվ ՍԴ/0070/01/22 քրեական վարույթի նյութերից երևում է, որ դատակոչված թվով 7 (յոթ) անձանցից Երևան քաղաքում բնակվում են միայն երկու վկաներ: Մնացած երեք վկաները, ինչպես նաև մեղադրյալն ու տուժողի իրավահաջորդը, բնակվում են Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս: Մասնավորապես՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալ Արմեն Ալեքսանյանը բնակվում է Լոռու մարզի Մեծավան համայնքում, տուժողի իրավահաջորդ Հովիկ Մելքոնյանը՝ Գավառ քաղաքում, վկա Դավիթ Կիրակոսյանը՝ Աբովյան քաղաքում, վկա Անդրանիկ Ղազարյանը՝ Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղում, վկա Հրայր Գրիգորյանը՝ Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում:

Այսպիսով, նկատի ունենալով, որ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 19.09.2022թ. որոշման մեջ նշված տարածքային ընդդատությունը փոխելու հիմքը սույն դեպքում առկա չէ, այն է՝ թիվ

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 4, թերթեր 39-40:

ՍԴ/0070/01/22 քրեական վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը չեն բնակվում Երևան քաղաքում և դրա մերձակայքում, գտնում եմ որ նշված քրեական վարույթը չի կարող քննվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից»[2]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

6. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ է արդյոք թիվ ՍԴ/0070/01/22 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունը:

7. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

8. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[3]*:*

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 50-51:

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

9. Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[4]:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[5]:

11. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

12. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս»*:

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը»*:

13. Նշված նորմերի համեմատական վերլուծությունից հետևում է, որ նախկին կարգավորումը պարտադիր պայման էր նախատեսում այն, որ քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվեն **տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս,** իսկ գործող կարգավորման

---

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

համաձայն՝ պարտադիր պայման է, որպեսզի վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվեն առաջին ատյանի **մեկ այլ դատարանի դատական տարածքում**:

14. Սույն գործով Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի մայիսի 12-ի որոշմամբ բավարարելով տուժողի իրավահաջորդ Հ.Մելքոնյանի միջնորդությունը, վարույթի ընդդատությունը փոխել և այն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է փոխանցել այն պատճառաբանությամբ, որ **վարույթին մասնակցող անձանց գերակշիռ մասը բնակվում են Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս** և մեղադրյալը նույնպես իր համաձայնությունն է տվել վարույթի ընդդատությունը փոխելուն[6]:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, չհամաձայնվելով նշված դիրքորոշման հետ, նշել է, որ ընդդատությունը փոխելու հիմքն առկա չէ, քանի որ քրեական վարույթի **մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը չեն բնակվում Երևան քաղաքում և դրա մերձակայքում**[7]:

Թիվ ՍԴ/0070/01/22 քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Ա.Ալեքսանյանը բնակվում է Լոռու մարզում, տուժողի իրավահաջորդ Հ.Մելքոնյանը և վկա Ա.Ղազարյանը՝ Գեղարքունիքի մարզում, վկա Դ.Կիրակոսյանը՝ Կոտայքի մարզում, վկաներ Մ.Ղազարյանը և Դ.Սարգսյանը՝ Երևան քաղաքում, վկա Հ.Գրիգորյանը՝ Սյունիքի մարզում[8]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 7-13-րդ կետերում շարադրված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո, պետք է արձանագրել, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշում կայացնելիս չի հիմնավորել, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են Երևան քաղաքի առաջին ատյանի

---

[6] Տե՛ս սույ որոշման 4-րդ կետը:
[7] Տե՛ս սույ որոշման 5-րդ կետը:
[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 19:

ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Ավելին՝ այդպիսի փաստական տվյալներ առկա չեն նաև քրեական վարույթի նյութերում:

Այսպիսով, գտնում եմ, որ թիվ ՍԴ/0070/01/22 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունը հիմնավորված չէ:

Հետևաբար, թիվ ՍԴ/0070/01/22 քրեական վարույթը պետք է ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ՍԴ/0070/01/22 քրեական վարույթը՝ Արմեն Հակոբի Ալեքսանյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով, ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ